



Բաժնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալբանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 3

Զ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1930

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յիսուս ըսաւ անոր, Մարիամ, ան ալ դարձաւ ու Եբրայեցիքէն Անոր ըսաւ Ռաբբունի:
(Յովհ. Ի. 16):

Յարութեան Ս. առաւօտը ծագելու վրայ է: Կի-
ներ, ինչպէս Մարիամ Մաղդաղենացին եւ միւս Մա-
րիամը, Սողովմէն կանուխ կ'իլլեն իրենց վերջին մաղ-
թանքներն ու ծառայութիւնները մատուցանելու կար-
ծեցեալ հանգուցեալ Քրիստոսին:

Նոյնիսկ կը մտածեն թէ ո՛վ պիտի գլտորէ քարը:
Բայց տես, քարը գլտորուած է եւ հոն կը կենայ
մէկը ճերմակ հանդերձներ հագած, բայց ոչ Յիսուս,
պլլ երկնային էակ մը, հրեշտակ մը, որ նոյնիսկ կը
խօսի իրենց չփնտռել «զկենդանին ընդ մեռեալս»: Կի-
նքը կը փախչին, Մարիամն ալ հետերնին, բայց
հազիւ թէ ինքզինքը ապահով գտաւ այդ լուսափայլ
երեւոյթէն, դարձեալ զգաց այն ահարկու պարապու-
թիւնը, որ կ'իշխէր իր էութեանը, այն օրէն ի վեր
երբ իր Փրկիչը բռնուած ըլլալուն լուրը առաւ, ու
վերջապէս տեսաւ զԱյն որ խաչը ուտին, յոգնած ու
անկարող, քրտնաթոր ճակատով մը վեր կը բարձրա-
նար. ահա՛նա տես եղաւ նաեւ այն ահարկու մահուան,
որուն մատնուած էր իրեն համար իր անձէն աւելի
սիրելի եղող Անձը: Ո՛հ, Մարիամի սիրտը ի՞նչ խոր
վէրքերով վիրաւորուած էր, ո՛վ կրնար վերստին
բժշկել զայն:

Մարիամին վիշտն հասկնալու համար միայն Մա-
րիամ մը ըլլաւ պէտք էր եւ կամ գէթ անոր ներքին

կեանքը, անոր նկարագիրն ու խառնուածքը լաւ գիտ-
ցող մէկը:

Ինքը զացած լուր տուած էր միւս աշակերտներուն
Պետրոսի ու Յովհաննէսի, որոնք իրեն հետ վազած
էին դէպի գերեզման ու վերջապէս միւս կանանց նման
ապշած բայց հաւատացած ետ եկած էին:

Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կայնեւ էր ու
կուլար:

Իր սրտի պարապութեան ծանրութիւնը հետզհե-
տէ աւելի զգալի կ'ըլլար: Կուլար, բայց կը յուսար,
կը յուսար դատարկ գերեզմանէն պատգամ մը ընդու-
նիլ, կը յուսար բոլորաբար քարերէն կամ նոյնիսկ
լուրթենէն ձայն մը լսել որ պիտի աւետէր իր սրտին
ամենէն մօտ եղող Անձին — Վարդապետին ուր ըլլալը:

Մինչ նէ յուսալքուած վիճակի մէջ ծովը ինկած
եւ փրփուրէն օգնութիւն հայցող մէկուն կը նմանէր,
մէկը իր ետեւէն կեցած կը հարցնէր, «Ով կին, ինչո՞ւ
կուլաս, ո՛վ կը փնտռես»: Մարիամ չճանչնար զայն
եւ պարտիզպանը կը կարծէ: «Տէր, ըսէ ինձի ո՞ւր գրիւր
զԱյն, որպէսզի առնեմ»:

Յիսուս ըսաւ անոր Մարիամ: Ինչպի՞սի ձայնով
մը, ի՞նչ շեշտով մը խօսեցաւ մեր Տէրը, մեզի յայտ-
նի չէ, բայց մէկ բան որոշ է թէ, Մարիամի մէջ ալ
կասկած չթողուց թէ՛ խօսողը նոյնինքն Տէրն է:

Ուստի խօսուած արժանաւոր շեշտին, արժանաւոր պատասխանը խոնարհ, պատասխանը ճշմարիտ ու պերճախօս, դուրս կը պոռթկայ իր բերնէն Ռաբբունի:

Մարիամ շեշտը Յիսուսինն է ու միայն Յիսուս այդ կերպով, այդ հանկերգով կրնար խօսիլ, նոյնպէս միայն Մարիամն էր որ նոյնքան քաղցր ու վստահող ու հաւատացող շեշտով մը կրնար կոչել իր Տէրը — Ռաբբունի: «Ես կը ճանչնամ Իմ ոչխարներս ու կը ճանչցուիմ Իմ ոչխարներէս»: Յայտնութիւն Բ. 17 ի մէջ կը կարդանք Պերգամոնի եկեղեցիին ուղղուած խօսքը. «Ով որ կը յաղթէ, պահուած մանանայէն ու տեղ պիտի տամ անոր ու ճերմակ խիճ մը պիտի տամ անոր եւ այն խիճին վրայ անուն մը գրուած, զոր մէկը չղիտեր, բայց միայն ան որ կ'ընդունի»: Ինձ կողայ թէ այս գաղտնիք մըն է Տէրսը եւ Անոր գնեալին միջեւ, գաղտնիք փոխադարձ սիրոյ լեցունութեան, վասնզի Փրկողին ու փրկեալին փոխադարձ սիրոյ չափը, միմիայն իրենք երկուքը կրնան հասկնալ:

Մարիամի ու Յիսուսի փոխադարձ սէրը, վերայիշեալ երկու բառերով կրնային արտայայտուիլ: Արդ, Մարիամ շեշտին մէջ յայտնի գաղտնիք մը կայ, որ որքան Մարիամի համար նշանակելի, նոյնքան արժէքաւոր է մեզի համար:

Մարիամ մի վախնար: Ես այն եմ, որ մեռալ ու ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից եւ Ես ունիմ մահուան ու դժոխքի բանալիները:

Մագդաղենացիին անցեալ եղկելի կեանքը, իր դիւահարութենէ ազատիլն ու խաղաղութեան հասնիլը, Յիսուսի մահով այդ խաղաղութեան վրդովումը, իր ականջին այս օրերուն հնչող այլ եւ այլ նախկին դիւային շշուկները հաշմանդամ ընելու աստիճան կապկպած էին զինքը. չունէր նէ հանգիստ, դիւահարութեան կեանքի ահաւոր ստուերը իր աչքին առջեւ կը ներկայանար հիմա ու կը սարսափեցնէր զինքը: Ասոր համար կ'ուզէր իր Փրկչին քովն ըլլալ, եթէ նոյնիսկ անշնչացած դիակն ալ ըլլար Անոր: Օ', այդ ալ իրեն մխիթարութիւն պիտի տար, վասնզի իրաւ որ չկար մէկը զինք հասկցող արնպէս՝ ինչպէս իր Տէրը, չկար մէկը զինք անցեալի վիճակէն պահող, եթէ ոչ Ռաբբունին: Անիկա իր ողջութեան պահունքանի՝ անդամներ միայն մէկ ակնարկով Մարիամի էութիւնը խոռովեցնող եւ յուսալքման անդունդը հասցնող խորհուրդները ճանչցած եւ միայն Մարիամ շեշտով մը վանած էր զանոնք, որով նաեւ իր ճակտին խոռովքի ամպերը շոգիացուցած էր վերահաստատելով իր խաղաղութիւնը: Այս շեշտը բաւական մըն էր իր մեղամաղձոտ, փոփոխական, միշտ յենարանի մը կարօտ նկարագրին. մանաւանդ հիմա, երբ գերերկրային լսողականները աւելի շատ էին իր վրայ քան ոեւէ ատեն, օ, որքան սփոփիչ դարման մըն էր իր խոցուած սրտի վէրքերուն:

Մարիամ, քաջալիրուէ: Ես կենդանի եմ, Ես Ան

եմ որ մեռալ, Ես մահուան ու դժոխքի բանալիներն ունիմ, ուստի դեւերը վնաս չեն կրնար տալ, Սատանային ու դժոխքին զօրութիւնը վերցուած է, օձին գլուխը ջախջախուած է, ուստի ապահով եղիր, յարձակում կրես ալ, չպիտի յաղթուիս, վասնզի յարձակիլ համարձակողը պարտաւ, անոյժ է:

Մարիամ, զօրացիր: «Ես եմ Ալֆա եւ Օմեգա Առաջինը ու Վերջինը»: Ես ոչ միայն առժամայէն յաղթած եմ, այլ յաւիտենապէս: Ես եմ Տէր տէր անց եւ թագաւոր թագաւորաց: Զօրացի՛ր, Մէջ մըն ալ թողուած պիտի չկոչուիս», «Ես քեզ արեւնդ մէջ տեսայ եւ ըսի, ապրէ՛»: Զօրացի՛ր ու զնա պատմի՛ր ուրիշներուն ինչ որ տեսար: Ալ բաւ է որ քու մեղքերուդ վրայ խորհիս, բաւ են Սատանայի ու դեւերուն տեսիլքները, բաւ է որ քու անձիդ շուրջը դառնան խորհուրդներդ, բաւ է որ առանձին մնաս այս տեղերը, հիմա զօրացի՛ր վազելու, գործելու, պատմելու ատենն է — Տէրը յարեալ — եւ դուն գնիկա տեսար:

Մարիամ ասոր դէմ ուրիշ պատասխան մը չունէր, եթէ ոչ Ռաբբունի: Օ', այս բառին մէջ կը բաղձար նա ծրարել իր քանի մը օրուան անցուցած բոլոր անձկութիւններն ու կարօտը, միեւնոյն ժամանակ իր Փրկիչը գտած ըլլալուն ուրախութեան բուռն գգացումը:

Խնդիր չէ ալեւս մութը ու խաւարին ահաբեկիչ շշուկները: Իմ Տէրս կը խօսի, Անոր ձայնը կը լսեմ ու կը ճանչնամ: Ալ այսօր վախճան անցեալ կեանքի: Դուն չես ուղեր որ քեզի դպչիմ՝ Բուռտքերդ համբուրելու, հապա կ'ըսես, «Գնա՛ պատմէ». Տէ՛ր, ալ թող դադրին ընդմիշտ այդ զգացումները, այլեւս կեանքը սկսաւ իմ մէջ: Բուռ խօսքիդ համաձայն զօրութիւն ընդունեցի եւ հիմա ուրախութեանմը կ'երթամ պատմելու աշակերտներուդ, եթէ նոյնիսկ չհաւատան ալ անոնք:

Ով այսօրուան Մարիամներ, Յարութեան Սուրբ առաւօտն է: Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ: Մահուամբ յաղթեց մահուան: Կը լսէ՞ք Յաղթականին ձայնը. որքան տիրական ու զօրաւոր, նոյնքան փափուկ ու քաղցր կը հնչէ ձեր ականջներուն, Մարիամ՝ Օ', ջանանք հասկնալ այս բառին մէջ ծրարուած խորախոր նշանակութիւնը:

Մեղաւոր ես, կամ փրկութեան վստահութեան չհասա՞ր, տարիներէ ի վեր կը չարչարուի՞ս, մտքիդ չ'պառկիր, զգացումներով չ'ես լեցուել, երազներով յայտնութիւն չ'ես ընդունիր, կեանքդ մասնաւոր փոփոխութիւն մը չ'կրիր, անցեալի մեղքերդ դեռ կը չարչարեն զքեզ, կամ անցեալ մեղքերու մէջ ինքալու երկիւղներէ՞ն կը տանջուիս, կը խորհիս թէ այս կեանքին մէջ չ'պիտի յաղթուիս. — «Ես եմ Յուդայի ցեղէն եղող Առիւծը, Դաւիթի արմատը, մի՛ լար»:

Թօթափէ՛, թաղէ՛ քու ցաւերդ, այսօր յարութեան օրն է, Յիսուսի մեռած մարմինը անապականն հա-

զած ջինջ լոյսի նման կը փայլի. դուն ալ քու եղծանելի բաներդ թաղէ այսօր, որ նոր էութեան մը տիրանաւ Գրիստոսի յարութեան քու մէջդ ներարկումովը: Թօթափէ զգացումներդ ու զգացական կեանքդ, Գրիստոս Գրիստոս այսօր ճշմարիտ կեանքը, վկայելու զօրութեան կեանքը բերած է, այսօր կրնաս հասկնալ եւ ճանչնալ Անոր յարութեան զօրութիւնը: Մի՛ դանդաղիր, այսօր տմենալարմար օրն է, լսէ բուժող, խրախուսիչ ձայնին շեշտը ու դուն ալ բացազանչէ, Ռաբբունի:

Աշխարհի վրայ կան շատ ոտքերիններ, բայց անոնցմէ ո՛չ մէկը քեզի համար մեռաւ, եւ ո՛չ մէկը քեզի համար յարութիւն առաւ, ու ո՛չ մէկը պիտի տայ քեզ քու բաղձացած խաղաղութիւնդ: Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի ըսող մէկ Ռաբբունի միայն կայ, Գրիստոս Գրիստոս յարուցեալը:

Խաչակրութեանց ժամանակ Եւրոպայի ասպետ թագաւորներէն մին՝ առիւծասիրտն Րիչար մուհամէտականներու կողմէն զերի բռնուելով բերդարդելուեցաւ: Անոր ասպետներէն մին, ցնաց փոքր Ասիա եւ Կիլիկիոյ, Սուրիոյ ու Պաղեստինի բոլոր ամրոցներուն աշէլ եւ որպէս մուրացիկ մը, երգեց առիւծասիրտն Րիչարին սիրած երգը, մինչեւ որ նա բանտին խորերէն լսեց իր սիրած երգին ձայնը, ու սոյն երգին ուրիշ մէկ համարը երգելով պատասխան տուաւ ասպետին թէ զեռ կ'ապրէր եւ վերջապէս ազատուեցաւ:

Երանի՛ թէ այս քանի մը ահար տողերն ալ արձագանդ արթնցնէին քու դժուարութիւններուդ ամրոցին խոր զմբէլներուն մէջ եւ լսելի ընէին Գրիստոսի ձայնը. — «Եկէ՛ք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ», ու զքեզ ազատէին յարութեան պայծառ լոյսն ու մաքուր օդը վայելելու:

Օրհնեա՛լ ըլլայ մեր Տէրսը Յիսուս Գրիստոսի փառաւոր յարութիւնը:

ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵՒՈՒ Է ՅԱՆՔԱԿԱՆ ԿԵՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԲ.

(Եսայ. 4րդ Թիւէն)

ԳՐԻՍՏՈՒՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մենք կը հաւատանք թէ Տէր Գրիստոս, որ կը դիտէր մահուանը խողը, ձկնորներուն ուռկան նետիւնը երկրագործներուն վարուցանը, որ անձամբ բաղմաբաղ ըլլալով հոն դերձ, ժամանակ կը գտնէր հարսնիքի մը ներկայ գտնուելու, կ'ուզէ որ մենք ալ թէ մեր եւ թէ մեր բարեկամներուն կեանքի բոլոր պարագաներովը շահագրգռուինք: Անիկա մեզի կարողութիւն տուած է հոգեւորական եւ կ'ուզէ որ Իր մեզի պարգեւած կեանքը վայելենք:

Անիկա մեզի տուած է ֆիզիքական մարմին մը, որ կը կարօտի սնունդի, գործի, մարզանքի եւ հանգիստի: Անոր բաղ

ձանքն է որ մենք վայելէ զգանք մեր սնունդէն, մեր գործէն ու մեր հանգիստէն: Հրաշալի բնութիւնը, անսահման, հիանալի անջրպետը զարգարուած արեգակներով, երաժշտութեան ներգաշնակութիւնը, երկինքի ու ծովուն կապոյտը եւ բնական տեսարաններու երփներանգ գեղեցկութիւնը մեր վայելքին ու Իր փառքին համար են:

Աստուած կ'ուզէ որ Իր զաւակները զգուշաւոր ըլլան իրենց հագուստին եւ շարժութեանը: Անոր բաղձանքն է քնշուշտ որ մենք յանկուցիչ քրիստոնեաներ ըլլանք: Ճշմարիտ է թէ մեր թագաւորին գործը ածապարանք կը պահանջէ, սակայն երբեք չպահանջեր որ անբաղաժաժար գտնուինք մեր ընկերներուն հանդէպ կամ մեր ուշադրութիւնը անոնց դարձնելու մէջ թերանանք:

Հնդկաստան ճամբորդած միջոցիս հոնդիպեցայ աստուածավախ հազարապետի մը, որ անառակ կեանքէ մը Գրիստոսի դարձած էր ու իր ահալջ ժամանակը կուտար Սուրբ գրքի ընթերցման եւ սրէկիցէ հաճոյքի մասնակցելէ կը խրջէր: Մեր այս հոնդիպումէն վերջ նամակ մը ստացայ յիշեալ սրիւնի հազարապետին որդիէն՝ հասարակային դպրոցներէն մէկին մէջէն, որ կը գրէ՝ «Խոտ ուրախ եմ Ձեր իմ հօր հանդիպելուն համար: Կը ինդրեմ, ջանացէք զայն անգլիական եկեղեցիին դարձնել, քանզի իր կրօնքը զինքը շատ կը թշուառացնէ»: Զարմանք չէ որ այդ եռանդուն տղեկը իր հօրը ընկերակցութիւնէն շատ երջանիկ չէր զգար ու քիչ մը կը քաշուէր կրօնքէ: Աստուծոյ կրօնքը երբեք թշուառութիւն չպատճառեր մարդու: Ոչ ալ Տէր Գրիստոս կը հաճոյանայ թշուառութենէ: Փրկիչը Ինքն էր որ ըսաւ՝ «Այս բաները ձեզի խոտեցայ, որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ մնայ, ու ձեր ուրախութիւնը մօրս ըլլայ» (Յովհ. 15, 11): Թէ՛ այս աշխարհէն եւ թէ՛ հանդերձաւ աշխարհէն կրնանք ուղիղ կերպով օգտուիլ որքան որ կարելի է:

Մի՛ վստահիր յուզումներու.

Յաճախ կը պատահի որ երբ հաւատացեալ մը Յաղթական կեանքը կը թեւակոխէ ու կը յաղթէ կամովին գործած մեղքերու, այնպիսի ցնծութիւն մը, խոնգալաւուցութիւն մը եւ յուսալից մը կը զգայ, որ իրեն կը թուի թէ օգին մէջէն կը քալէ: Սակայն այս զգացումները միշտ տեղի չեն ունենար եւ մենք ենթադրելու չենք թէ յուզումներու բացակայութիւնը կ'ապացուցանէ թէ Գրիստոս տակաւին Իր լրութեամբ մտած չէ մեր մէջ: Աստուծոյ փառքն է որ մենք Իրեն եւ Իր Ոտքին վստահինք, չէ թէ զգացումներու: Անիկա չուզեր որ մենք զմեզ վստահենք մեր յաղթութիւնը կամ Իր մեր մէջ բնակելը դառնելով մեր Իր ներկայութեան յայտնուելուն, կամ զգացումներուն մասին ուռալուց կաղմած գաղափարներով: Աւելի խորհէ օրհնեալ Փրկիչին՝ քան քու տարած յաղթութեանդ կամ ընդունած օրհնութեանդ վրայ:

Կը յիշե՛ս Սփրքընի այնքան պատշաճ դիտողութիւնը, որ կ'արժէ հոս յիշել: Անիկա կ'ընէ՝ «Յիսուսի նայեցայ եւ ահա անիկա թուաւ, անյայտացաւ»: Ուստի մի քննիր ու փորձիր քու յաղթութիւնդ: Պարզ վստահութեամբ շարունակ վստահէ Գրիստոսի, Անիկա քեզ չկրնար թողուլ: Արդարեւ լուսագոյն է Յաղթական կեանքը թեւակոխել պարզ հաւատաւով քան յուզմունքով եւ սքանչացումով: Քանզի երբ յուզմունքը կ'անցնի եւ կեանքը միօրինակ ու հասարակ կը դառնայ, մենք կը փորձուինք խորհիլ թէ յաղթութիւնը մեր յուզմունքին հետ անհետացած է:

Մի դարմանար երբ հաշիւներ չեն կրնար տեսնել մեր յաղթութիւնը. —

Միայն մէկ մարդ ապրած է անմեղ կեանք մը, անընդ-
հատ կատարելապէս յաղթական կեանք մը, Քրիստոս Յիսուս
մարդը: Սակայն Անոր ժամանակակից կրօնական առաջնորդնե-
րը այնքան կոյր էին որ չկրցան տեսնել Անոր մէջ յաղթական
կեանքը, եւ զԱյն գինով կոչեցին: Մենք գիտենք որ այս մար-
դը մեղաւոր մըն է ըսին Քրիստոսի համար: Ուստի զարմանա-
լու չենք երբ մարդիկ մեր մէջ ալ չկրնան ճանչնալ յաղթա-
կան կեանքը: Մենք շատ խոնարհ ըլլալու ենք: Երբ ուրիշներ
մեզի կը հակառակին կամ կ'ընդդիմանան ու մեր անկեղծու-
թիւնն եւ ուղղափառութիւնը կ'ուրանան, մեր մէջ դառնու-
թեան արմատ մը կամ սիրոյ հակառակ որեւէ զգացում ար-
թնալու է: Վայրկեան մ'իսկ անոնց զգալ տալու չենք թէ
մենք իրենցմէ անելի սուրբ ենք, եթէ ոչ մեր յաղթութիւնը
ընդամենը կ'ըլլայ:

Անշուշտ մարդիկ մեղ սխալ պիտի հասկնան ու մեր ամե-
նէն մեծ հակառակորդը չէ թէ աշխարհ՝ այլ եկեղեցին պիտի
ըլլայ: Սատանան որո՞մ ցանած է եկեղեցիին մէջ եւ միայն
Աստուած կրնայ ցորենը եւ որո՞մը զանազանել: Ամենէն մեծ
հակառակութիւնը ակնկալելու է չարին որդիներէն, որ եկեղե-
ցիին մէջ կը գտնուին: Անհաւատները չեն որ Տէրոջմէն «Ձա-
րին որդիները» կը կոչուին այլ կրօնական անհաւատները: Տես
Մատթ. 13. 25, 38: 23, 15: Յովհ. 8, 38-44: Ասիկա ստակալի
խորհուրդ մըն է, սակայն ուշագրւութեան արժանի: Ծառան իր
տիրջմէն մեծ չէ: Եթէ կրօնականներն էին որ Քրիստոսի հա-
կառակեցան, մեզի ալ պիտի հակառակին: Սակայն հակառա-
կութեան ամէն մէկ արարք մեզի պատեհութիւն կ'ընծայէ մեր
մէջ բնակող Քրիստոսի կեանքը ցուցնելու ոչ թէ շրթունքով
այլ կեանքով, մեզի պատեհութիւն կ'ընծայէ ապացուցանելու
թէ Տէր Յիսուս Քրիստոսով յաղթութիւն մը գոյութիւն ունի:
Թէպէտեւ ոմանք մեզի հակառակին, մեղ քննադատեն ու
դատաւարտեն, մեր շուրջը գտնուողներէն շատեր մեր Քրիստո-
սով տարած յաղթութիւնը տեսնելով պիտի ուրախանան, քանզի
պիտի տեսնեն թէ Աստուած կարող է ամբողջութեամբ քանդել:

Թուլատեւի՞ է յիշեցնել մեր ընթերցողներուն պարզ
իրողութիւն մը, որ սակայն յաճախ կը մոռցուի: ՀիՄԱ է
միակ ժամանակը որ կրնա ապրիլ Յաղթական կեանքը: Միայն
հիմա, այս վայրկեանին կրնա Քրիստոսով յաղթութիւն ստա-
նալ: Յաղթական կեանքը միայն ստիպողական պարագաներու
համար չէ: Եւստ սիրելի քրիստոնեաներ ապագայ պատեհու-
թիւններու կը սպասեն որ իրենց մէջ ապրող Քրիստոսը ի յայտ
բերեն: Անոնք կը սպասեն աղօթածողովի մը, բացօդեայ ժո-
ղովի մը կամ ուրիշ համամիտ հոգիի մը հետ տեղի ունենա-
լիք խօսակցութեան մը: Սակայն հիմա է յաղթութեան միակ
ժամանակը: Աստուած չէ թէ միայն Սէր այլ նաեւ Լոյս է:
Մեր Տէրը ըսաւ՝ «Թող ձեր լոյսը լուսաւորէ», ոչ թէ երբ
պատեհութիւնը ներկայանայ, այլ միշտ, ամէն տեղ:

Ամէն առաւօտ, երբ մահիճէդ ցատկելով կ'եւլէս ու քեզի
եւ Աստուծոյ կ'ըսես «Ինձի համար ապրիլը Քրիստոս է», սրտէ
այդ օրը ամէն մէկ քեզի հանդիպող անհատին ցուցնել Քրի-
ստոսի փառքէն մաս մը: Թող տանք մէջ բնակողները տեսնեն
քու լոյսը ու յաղթութիւնը: Թող քու գործակիցներդ գո-
սենեակին կամ գործարանին, խանութին կամ նաւուն կամ
դպրոցին մէջ տեսնեն թէ Քրիստոս քու սրտիդ մէջ կը բնակի:
Ինչո՞ւ արհեստավորներ, նամակատան մէջ ուղեւորներ, կառ-

քերու վարիչներ չհասկնան քու գաղտնիքը: Քրիստոսի նա-
մակները, ճանչցուած ու կարգադրուած ամէն մարդէ. (Բ. Կոր-
3, 2):

Միեւնի բարեկամներէս մին, դատաւարակուած անհատ
մը, որ ինքզինք ոգեւոր ըմպելիներու գործածութեան տալով
այդ մոլութեան տիղմին մէջ թաթախուած գտաւ ինքզինք
դատարկաշրջիկներու համար սարքուած միսիոնարական ժողովի
մը մէջ դարձի եկաւ: Յաջորդ օրը երբ փողոցի եւեթարական
կառքը կը մտնէ, վարիչը ապշած կը նայի անոր, քանզի անոր
հագուստին վրայ կը նշմարէ մուրացկանութիւն, մինչ զէմքին
վրայ երկնային ցուացում մը: «Ընկեր», կ'ըսէ անոր, «Երեսէդ
այնպէս կ'երեւնայ որպէս թէ մէկը մեռնելով մեծ հարստու-
թիւն մը թողած ըլլայ քեզի»: «Իրա՛ւ ես», կը պատասխանէ
բարեկամս, «Յիսուս Քրիստոս ինձի համար մեռնելով՝ ինձի
թողուց Իր հարստութիւնը երկնային փառաց մէջ»: «Եթէ այդ-
պէս է, քեզի քիչ մը աւելի լաւ զգեստ մըն ալ կրնար տալ»,
պատասխանեց կառքին վարիչը հեգնութեամբ: Աւելորդ է
ըսել թէ Տէրը անոր այդ ալ տուաւ:

Մեր ուրախութիւնը նոյնիսկ օտարներու ուշադրութիւնը
գրաւելու է՝

Ապագային մի սպասեր, հիմա յաղթող եղիր: Այնպիսի
հաղորդակցութեան մը մէջ գտնուէ Քրիստոսի հետ, որ Անիկա
կարող ըլլայ ամէն տեղի քու միջոցով Իր փառքը ցուցնել:
«Ինձի այս շնորհքը տրուեցաւ հեթանոսներուն մէջ Քրիստոսի
անքննելի ճիւղութիւնը քարոզելու, եւ ամէնը լուսաւորելու
թէ ինչ է այն խորհուրդին տնօրէնութիւնը՝ որ ի յաւիտենից
ծածկուած էր Աստուծոյ քով, որպէսզի հիմա Աստուծոյ բազ-
մատեսակ իմաստութիւնը յայտնի ըլլայ եկեղեցիին (քու եւ
իմ) ձեռքով» (Եփես. 3, 8, 9, 10): Այո, նաեւ Անոր հրաշալի
սէրը եւ անձաւելի փառքը:

(Շաբ.)

ԱՆԻԿԱ ՄԵՐ ՄԵՂՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՎԻՐԱԿՈՐՈՒԵՑԱԻ

Ես. ԾԳ. 5

Յուրտ ձմեռնային ներկոյ մըն էր: Հայրը նոր վե-
րադարձաւ գործէն, ձիւնը թօթուկի իր կօշիկներուն
վրայէն եւ մտաւ խոհանոցը ու տեղաւորուեցաւ ջեր.
մոցին առջեւ, ուր մայրը նստած կը հիւսէր: «Կը յի-
շե՞ս, այսօր այն օրն է»...: Հայրը յօնքերը պոստեց կար-
ծես չէր ուզեր թուլատրել որ մէկը իր սրտին այդ խոր
եւ անխափ վէրքին դաչէր: Բան մը չըսաւ, բայց ար-
ցունքի կաթիլներ միայն գլորեցան այսօրն ի վար:
Խոշոր շունը որ անցեալին մէջ միշտ իրենց դստեր
հետ կը խաղար, կարծես թէ հասկնալով խօսակցու-
թեան նիւթը, մտեցաւ իրեն եւ դունչը դրաւ իր ծնրան
վրայ: Մարդը խիստ եւ արագ շարժումով մը մէկդի
հրեց շունը, որ կարծես զլջալով իր ըրածին վրայ եծ
գնաց ու անկիւն մը կծկուելով հաւատարիմ աչքերը
սնկեց իր տէրոջ դէմքին, գաղտագողի անոր թախի-
ծին մասնակից ըլլալով:

Դոյն իրիկունը քաղաքի եկեղեցիներէն մին պըճ-
նուած ու զարդարուած էր, պատրաստ ընդունելու
ժողովուրդը մեծ հաւաքոյթի մը համար: Այդ լուսա-
վառութենէն հետաքրքրուած փողոցային աղջիկ մը
ներս կը սարթէր եկեղեցւոյ դռնէն: Դա իր բարակ շա-
լով փաթեռուած, անկիւն մը կճկտուեցաւ ցուրտէն
դողդղալով: Քարոզիչը կը խօսէր Անոր մասին, որ մեր
մեղքերուն համար վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնու-
թիւնը իր վրան առաւ:

Աղջիկը քարոզի ընթացքին սկսեալ ներհայեցողա-
կան ակնարկ մը նետել եւ տեսնել թէ ինքն ան է, որ
կը կարօտի իր անօրէնութիւնները հասկցող եւ իրեն
ներող մէկու մը:— Երբ քարոզը լմնցաւ, երգ մը առա-
ջարկուեցաւ: Այս երգը ծանօթ էր իրեն, նէ երգած էր
յաճախ, երբ ծնողական տան մէջ էր ուրախ ու երջա-
նիկ: Բայց հիմա՛, հեռո՛ւ էր այն տեղը, իր հպարտու-
թեան չէր ձգեր հոն վերադառնալ:

Քարոզիչը տմկիւնէն վար իջաւ եւ երբ ժողովուր-
դը արդէն կը քաշուէր, աղջիկը ժողովուրդէն անոր ու
ըսաւ. «Անիկա իմ մեղքերուս համար վիրաւորուեցաւ.
այս խօսքը ինծի համար խօսուած է, Դ. Քարոզիչ»:
Քարոզիչը չհասկցաւ այդ արտայայտութիւնը. միթէ
կրնա՞ր իրեն վստահիլ, ու դռնէն դուրս ելաւ տուն
երթալով: Աղջիկն ալ եկեղեցիէն բաժնուեցաւ:

Ի՛նչ կը սկստայ այդ տեղերը, հարցուց ոստիկան
մը եկեղեցիէն դուրս գալու ելող աղջկան:

— «Յո՛ւ, ներս մտայ քիչ մը տաքնալու»: Ուժով հա-
զը դարձեալ բռնեց եւ խեղճ աղջիկը չ'իյնալու համար
ստիպուեցաւ քովի պատին կռնիլ: Երբ որ հազը
դադրեցաւ, դարձեալ իր ճամբան շարունակեց,
քաշքշելով ինքզինքը փողոցն ի վար ու կէս անօթի:
Քիչ վերջը արդէն քաղաքէն դուրս ելած էր: Անծանօթ
ոյժ մը կը քաշէր զինք մուծին մէջէն, հեռո՛ւ, քաղա-
քէն հեռո՛ւ: Քանի մը ժամ քալած էր: Հեռուն դարձ-
եալ գիւղի մը տունները մուծին մէջէն կարծես վ'եզեր-
ուէին. հոն աջակողմէն տան մէջ դեռ լոյս կայ, կար-
ծես թէ իր ճամբան լուսաւորելէ զատ հրաւէր կը
կարդայ իրեն, տո՛ւնդ եկ, տո՛ւնդ եկ...:

Իրաւ ալ հորենական տան ճրագն էր այն, որ իր
անառակութեան ճամբան ձեռք բռնած օրէն ի վեր
ամէն գիշեր կը վառէր, ցոյց տալու օր մը ետ դառ-
նալ ուղղող աղջկան՝ թէ ծնողքը գինքը կը սիրէին դեռ:

Կամացուկ մը ներս մտաւ ծանօթ պարտէզին
դռնէն, քայլերը ուղղեց դէպի տան դուռը, որ մէկ
շարժումով բացուեցաւ, վամզի այն օրէն ի վեր դուռն
ալ երբեք գոցուած չէր, եւ ներս դէպի խոհանոցը ու-
ղեւորեցաւ: Եունը թէեւ առաջին երկվայրկեանին
խնչեց, բայց ճանչնալով աղջիկը՝ անմիջապէս մօտե-
ցաւ անոր ու քօնելով, տարիներու կարօտը կ'ուզէր
առնել իրմէ հաւատարիմ կենդանին իր սառն ձեռքերն
ու ոտքերը լզելով:

Առտու էր. մայրը վերէն խոհանոց իջաւ ջերմոցը
վառելու, ու զարմանքով տեսաւ մարած ածուխներուն
առջեւ ցնցոտիներու կոյար, որուն առջեւ կը պառկէր
շունը անշարժ, կարծես վախնալով թէ մէկը կրնար
արթնցնել: Գնցոտիները շարժեցան եւ մայրը անմի-
ջապէս ճանչցաւ անոնց մէջէն երեւցող իր անձնական
զաւկին դէմքը: Մարգարի՛տ, Մարգարի՛տ գոչեց նա,
իր բազուկները երկարելով անոր պարանոցին, զայն
գրկելու համար:

Մայրի՛կ, մայրի՛կ, Թոմովեց աղջիկը, իյնալով
մօրը գրկացը մէջ, աւելի չէր կրնար խօսիլ, խղճի
խայթը, արցունքները, երախտագիտական դժբաղդ
կը խեղդէին իր ձայնը:

Մինչ մայր ու աղջիկ երկար տարիներու կարօտը
կ'առնէին գրկախառն, մէկը մօտեցած էր անոնց,
հայրն էր այն. ալ խիտ, կարծր, բարիացող չէր,
ճանչցած էր իր սրտահաստը դուստրը, մօտեցաւ անոր,
փափկօրէն առաւ զայն իր գրկին մէջ, վասնզի նուա-
ղելու վրայ էր եւ տարաւ ննջասնեակ:

— Մայրի՛կ, հեծեց աղջիկը, «Անիկա իմ մեղքե-
րուս համար վիրաւորուեցաւ»:

— Այո՛, այո՛, Թանկագին զաւակս, քեզի համար:
Եթէ քու մայրիկդ աննկարարագրելի ուրախութիւն
կը զգայ զքեզ վերստին տեսնելով, չե՞ս զգար Առտու
ծոյ ուրախութիւնը, որ զքեզ նորէն գտած է:

Աղջիկը դարձեալ կրկնեց, «Անիկա իմ մեղքե-
րուս համար վիրաւորուեցաւ» ու այս իրեն վերջին
խօսքը եղաւ:

Քանի մը վայրկեան յետոյ իր դէմքը այլափոխուե-
ցաւ: Մեղքերու Թողութեան եւ աստուածային խաղա-
ղութեան կնիքը իր ճակատին զարնուած էր: Քնացա՛ւ
յաւիտենապէս, ա՛յ չարթննալու պայմանաւ, քնացաւ
ճիսուս քրիստոսի շնորհքին ու ողորմութեան կռնե-
լով: Աշխարհ զինքը մերժած էր, բայց ճիսուս ընդու-
նած էր զինքը, վասնզի «Անիկա մարդոցմէ անար-
գուեցաւ ու երեսէ ձգուեցաւ, փշտերու սէշը աւ ցաւե-
րու տեղեակ եղաւ, եւ Անկէ երես դարձնելու մարդու
պէս եղաւ, անարգուեցաւ ու զԱնիկա չյարգեցինք:
Իրաւցնէ Անիկա մեր ցաւերը վերցուց ու մեր վիշտերը
իր վրայ առաւ, եւ մենք զԱնիկա վիրաւորուած, Առ-
տուծմէ զարնուած ու չարիքի հանդիպած սեպեցինք:
Բայց Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ,
եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ. մեր
խաղաղութեան պատիժը զԱնոր վրայ եղաւ, եւ Անոր
վէրքերովը մենք բժշկուեցանք»: (Նսայ. ԾԳ. 3—5):

Հոգի, Թոյլ տուր որ այս իրական պատմութիւնը
Ժւ մանաւանդ վիրաւոր փրկչին մ'եծ Սէրը այս աւագ
շաբթուան մէջ խօսի քեզի հետ եւ յաւիտենական
կեանքի առաջնորդէ զքեզ:

ՎԵՐՋԻՆ ԶԱՅՆ ՄԸ ԼՈՁ-ԱՆՃԷԼՈՒՄԷՆ

Ռուսահայ մըն եմ եւ ծնած եմ Ալէքսանտրապոլում. ինը տարեկան հասակիս ընդունած եմ բողոքականութիւնը ծնողներուս շնորհիւ, եւ կրնամ վկայել թէ այդ ժամանակից նախանձոտ եմ եղած իմ կրօնքիս. այդ ժամանակ բողոքականութիւնը նոր էր մտած համարեայ յիւր երկիրը, եւ մեր Լուսաւորչական եղբայրներից շատ մեծ հաւածանք կրեցին մեր մեծերը եւ իմ հառակակիցներէս ալ ինծի եւ ինծի պէսերուն: Ընկերակիցներս ինծի ֆարմատին կ'ըսէին եւ կը ծեծէին ըսելով թէ հայհոյութիւն ըրէ, որպէս թէ հայհոյութիւն ընելով ֆարմատին չեմ ըլլար. բայց ես ծնողներէս սորված էի թէ հայհոյութիւն ընելը մեղք է, ուստի յօժար կամքով ծեծ կ'ուտէի եւ հայհոյութիւն չէի ըներ: Մեզի դէմ հաւածանքը այնքան սաստկացաւ որ մեր մեծերը ստիպուած եղան դադարել Դարսի շրջանը Դարադուլում անունով գիւղը հաստատուել: Անցաւ տարիներ եւ երբ պատահեալով ինչ անցայ երիտասարդութեան շրջանը, սկսայ կրօնի մասին մտածել: Այդ ժամանակ մի հարց ծագեց իմ մէջս թէ արդեօք եթէ ես մեռնիմ երկիրնք պիտի երթամ թէ դժոխք: Բայց որքան որ կը մտածէի, չէի կրնար մի որոշում տալ, երբոր կ'ըսէի երկիրնք կ'երթամ, կարգ մը մեղքեր կուգային աչքիս առջեւ, կ'ըսէի, ուրեմն դժոխք պիտի երթամ, այդ ժամանակ ալ կարգ մը բարի գործեր կուգային աչքիս առջեւ, այնպէս որ կը մնայի առանց որոշման, եւ շատ անգամ այդ բանը զիս անհանդիստ կ'ընէր: Տարիներ անցան, մինչեւ որ ամուսնացայ զաւակներու աէր եղայ, նոյնիսկ հաղորդութեան ալ անգամ եղայ. բայց դարձեալ այդ հարցը իմ մէջս անուժեղի կը մնար. բայց փառք կուտամ Աստուծոյ որ Իր միտքին Որդւոյն քաւարար արեանը միջոցաւ Լուծեց այդ հարցը իմ մէջս: 1918 ին մեծ պատերազմի տոնն երբոր դադարեցինք Ռուսաստան, հոն ես հիւանդացոյ եւ զիս տարին հիւանդանոց. հիւանդութիւնս բուսական ծանր էր, այնպէս որ ոչ մի մարդ յայտ չուներ թէ ես պիտի առաջանայի, բայց թէ ես կ'աւրժեի դիշոր եւ յորեկ անդադար, եւ մի օր աղօթքի սրահուն դարձեալ այդ հարցը եկաւ առջեւս «Ահա մահուան անկողնին մէջ եմ», արդեօք ի՞նչ է իմ վիճակ. երկիրնք պիտի երթամ թէ դժոխք. ո՞չ փառք այն ժամուան համար, վասնզի Յիսուս Քրիստոս խաչափայտին վրայ ներկայացաւ իմ աչքիս առջեւ ըսելով. «Ես քեզի համար եմ մեռած ով կասկածոտ մարդ», եւ այդ րոպէին կարծես աչքերս բացուեցան եւ ինքզինքս յիմար կոչեցի ըսելով թէ՝ եթէ մարդիկ արդար լինէին, Քրիստոս երբեք մեռնելու չէր գար, ուրեմն մարդիկ մեղաւոր էին որ Քրիստոս եկաւ մեռնելու, որպէսզի մեղաւորը փրկէ, եւ այդ ժամանակ սկսայ աղաղակել, ո՞վ մեղաւորներու համար մեռնող Քրիստոս, ահա ինքզի մեղաւոր մը որ մահուան անկողնին մէջ կը տանջուիմ, օգնէ՛ ինձ: Արդեօք գիտէ՞ք թէ ինչ պատահեցաւ ինձ այդ րոպէին: Երկար տարիներէ ի վեր զիս տանջող հարցը Լուծուած էր. ո՞չ, ի՞նչ ուրախութիւն մը եկաւ իմ սրտիս մէջ, զորս չեմ կրնար նկարագրել. այդ ուրախութիւնը միայն անոնք կարող են ըմբռնել, որոնք ունեցած են ինձ նման այդ ապրումը: Մահուան անկողնին մէջէն Տէրը զիս հանց եւ զիս բժշկեց, եւ փառք կուտամ Ասոր, որ այն օրէն ի վեր կ'ապրիմ եւ կը վկայեմ իմ գացած տեղերուս մէջ շատ մը անհատներու եւ այսօր ալ կուգամ վկայել հրապարակաւ բոլոր «Բանբեր» ընթերցողներուն թէ Յիսուս Քրիստոս իմ Փրկիչս է:

Միեւնի ընթերցողներ, Աստուած նոյնն է, երէկ այսօր եւ ամէն օր: Մի կասկածիր քու շատ մեղքեր ունենալուդ համար, այլ միայն վստահէ Ասոր, եւ խոնարհաբար ինքզինքդ ձգէ Ասոր խաչին ոտքը, եւ պիտի գտնես այն խաղաղութիւնը, որ Տէրը պատրաստած է բոլոր իրեն հաւատացողներուն համար: Քրիստոսի մէկ տկար զինուորը

1 Մարտ 1930

ԱՐՐԱՀԱՄ ԵՇԻԼԵԱՆ

ՄԱՆՈՒ. ԽՄԲԳ.— Վերոյիշեալ վկայութիւնը տպագրուած է Թեան տալու վերջին պահուն մեզի հասաւ. հետեւեալ գրութիւնը, զոր ուղեցինք իսկութեամբ հրատարակել, հանգիստ մաղթելով մեր եղբոր ու միւսներուն իր ընտանիքի անդամոց:

«Մարտ 10ին Լոզ-Անճէլիսի Գեթսեման եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յուղարկարարութիւնը Պ. Արարհամ Եշիլեանի: Եկեղեցին իր ամբողջ տարողութեամբ լցուած էր: Պաշտամունքը եւ Թաղման արարողութիւնը կատարեց Վեր. Ա. Ս. Երէցեան եւ կարգաց հանգուցեալին գրած ամենէն վերջին գրութիւնը, որուն մէկ օրինակը զրկած էր «Բանբեր» մէջ հրատարակուելու: Պ. Եշիլեան իր քրիստոնէական մարտի կեանքովը եւ հոգեւոր ծառայութիւնովը ամենուրեք սիրելի եղած էր: Անիկա ապրեցաւ իր Փրկչին համար եւ Անով իր վերջին շունչը փչեց: Որհնեալ ըլլայ իր յիշատակը»:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐՈՒ. «Պ. ՊԵՏԷՐՍ»

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Դ. ԳԼՈՒԽ

Օ Դ Ը

«Աստուած քաւ, ջուրերուն մէջուղը հաստատութիւն ըլլայ եւ ջուրերը ջուրերէն գառէ: Եւ Աստուած հաստատութիւնը քաւ. ու հաստատութեան տակ եղած ջուրերը հաստատութեան վրայ եղած ջուրերէն զատեց, ու. այնպէս եղաւ: Եւ Աստուած հաստատութիւնը երկինք կոչեց, եւ իրկուն ու առտու ըլլալով՝ երկրորդ օրը եղաւ»:

Այս ի՞նչ երկինք է, որուն ստեղծագործութեան նկատմամբ մեզի հոս կը պատմուի: Որոշ է որ այս չէ այն երկինքը, ուր Աստուած ու հրեշտակները կը բնակին եւ որու վրայով քառած է, «Երկինքներու երկինքը չին կրնար զփեղ պարփակել: Վերի սողերուն մէջ խօսուած է յաւեա երկիրը շրջապատող օդին. միջնորդաւ վրայ: Աստուած զայն ալ երկինք անուանեց. ուստի այդպէս կը կոչեն զայն նաեւ. աշխարհի բոլոր լեզուները, ան մարդուն աչքերուն առջեւ. կը տարածուի՝ ամբողջ գոյնեւոր. հաւմար թէ՛ ո՞չ թէ միայն իր ոտքերու տակի՝ երկիրը գոյնեւոր ունի, հապա նաեւ անհոնքէն բարձր, Լուսաւոր աշխարհ մը՝ իր գլխուն վերեւ»:

Թերեւս շատեր կը խորհին, ատ որոշ է թէ մեր վերեւը բան մը կայ. Թերեւս ուրիշներ ալ կը կարծեն այդ երկինք կոչուածը միայն քրիկ մը օդ է եւ ուստի արժան չէ զայն Աստուծոյ մէկ նոր արարչագործութիւնը անուանել: Բայց ինչո՞րը բոլորովին տարբեր է: Որինակի համար, լուսինն շուրջը այդ օդի միջնորդար չկայ, եւ եթէ հոն եղած ըլլայինք, նոյնիսկ լոյս ցորեկին օդէն կազմուած այդ կապոյտ երկնակամարը չպիտի տեսնուէր:

նեխնք, հապա միայն անասնման պարսպութիւն մը եւ սեփ սեւ խաւար մը, որոն մէջէն արեգակն ու աստղերը անտանկիօրէն խողովոցնող տաք լոյս մը մեզի պիտի խրկէին: Աս պապացոյց մըն է թէ մեր գլխուն վերեւի կապոյտ երկնակամարը Աստուծոյ մէկ գործն է եւ առանց Անոր մասնաւոր ստեղծագործութեանը չէր կրնար գոյութիւն առնել: Այս մասին Սուրբ գրքին ճիշտ հաւմածայն է գիտութիւնն ալ, որ կ'ըսէ. «Որոշապէս ընդունելու է թէ տաք երկիրը երկար ատեն շրջապատուած էր խիտ շոգիներու խառով մը, որմէ չէր կրնար թափանցել լուսոյ ունէ ճառագայթ: Ուստի երկրի մակերեսը կատարեալ խաւարով ծածկուած էր: Բայց այս շոգիները հետզհետէ պաղեցան եւ անոնց մէջ խառնուած շատ մը ծանր նիւթեր երկրի վրայ իջան եւ որոնցմով հետզհետէ գոլացաւ աւելի մաքուր օդ մը, որ մերինն նման էր եւ որուն մէջէն կրնար ջրաշոգի բարձրանալ եւ ամպեր կազմել: Այս մեծնորոտը կազմուելու էր բուսական ու կենդանական աշխարհի գոյութիւն առնելէն առաջ: Այդ օդային խաւին նախկին քաղցրացոյցի տարրերը մասնաւորաբար նպաստաւոր էին Տօն բուսականութիւն մը յառաջ բերելու համար»:

Արդ՝ ի՞նչ է նպատակը այդ մեծնորոտին կամ «Հաստատութեան»: Նախ՝ վերի ջուրերը, այսինքն ամպերը, վարի ջուրերէն գատել: Եթէ ան չ'ըլլար, մեր վերեւը շարժող այս ջրակոյտերը ցամաքին ու ծովերուն վրայ պիտի դիզուէին՝ երբ խիտ ու անմաքանց մառախուղ մը, որուն մէջ մենք պիտի խարխաւէինք եւ քնաւ չպիտի կրնայինք տեղեկանալ ոչ մեր երկրի մակերեսին եւ ոչ ալ երկնքի գաղանփերուն: Միեւնոյն ատեն յաւիտենական խառնութիւն ու ցուրտ պիտի տիրէր եւ հացահատիկներուն ու պտուղներուն հասունանալը անկարելի պիտի ըլլար: Թերեւս շատեր կը խորհին թէ երբեմն մեր վերեւը շարժող մի քանի ամպերը արծան չէ վերի ջուրեր կոչել, հապա հարկադրել զանոնք ընդարձակածաւալ ուղիներով: Սակայն եթէ անոնք հիւսիսային Ամերիկայի Ալպաքա կոչուած երկրին մէջ քնակելու ըլլային, — ուր գրեթէ ամբողջ տարին տեղատաք րափ անձրեւը կը տիրէ, — տարբեր գաղափար պիտի ունենային այդ արհամարհուած ամպերու մասին: Բայց մենք կրնանք այս խնդիրը ուրիշ կերպով ալ պարզել: Երկրի վրայ տեղացող անձրեւէն ու ձիւնէն կը կազմուին առուակները եւ ասոնցմէ ալ գետակներն ու ափազին գետերը: Այսպէս մեծ գետեր են Եփրատը, Բոնը, Հռենոսը եւայլն: Բայց հարաւային Ամերիկայի Ամազոն գետը իր բերնէն 60 միլիոն դէպի վեր արդէն այնքան լայն է, որ մարդ մէկ եզերքէն միւսը չկրնար տեսնել եւ կը կարծէ թէ իր առջեւ ծով մը տարածուած է: Այդքան լայն ըլլալով հանդերձ՝ անոր խորութիւնը կը հասնի 600 ոտքի: Զրային այս տիտանեան քանակութիւնը իր կոհակները անդադար դէպի ծով կը թաւալէ եւ անոր մէջ կը թափի այնպիսի ուժգնութեամբ որ նաւավարը եզերքէն 70 ժամ հեռուն ծովուն մէջ անուշ ջուր կը գտնէ: Անագոնէն շատ փոքր գետեր չեն նաեւ Միսիսիփի, Բիստը լա Փլամա, Լենա, Նիլոս, Վոլգա, Նեղոս, Գանգէս եւ ուրիշ գետեր: Ամերիկայի, Աֆրիկայի եւ Ասիայի մէջ: Հազարաւոր տարիներէ ի վեր այս բոլոր գետերը ափարկու քանակութեամբ ջուր ջուրերը ամպերէն կուգան եւ անոնք չպիտի կարենային հաւաքուիլ ինչ, եթէ հաստատութիւնը եղած չըլլար: Դարձեալ՝ այդ ջուրերը վար չպիտի տեղաշարժէ, եթէ անոնք նախապէս երկրէն երկնքը բարձրացած չըլլային: Գիշեր ցորեկ անտեսանելի կերպով դէպի երկնք կը բարձրանան Միսիսիփիներ եւ Անագոններ: Այս տեղի կ'ունենայ հետեւեալ կերպով. — Արեւի ճառագայթին ազդեցութեան տակ ջուրի մակերեսին վրայ փոքր պղպշակներ կը

գոյանան, որոնք օճառի պղպշակներուն նման օդով լեցուած են: Այս օդը արեւէն տաքնալով կ'ընդարձակի եւ կը թռնակնայ: Ուստի պղպշակը պարունի մը նման վեր կը բարձրանայ եւ կը կազմէ ամպերը, որոնցմէ միայն մէկ հատը յաճախ հազարաւոր դոլ ջուր կը պարունակէ: Այսպէս Աստուած աննշան բանէ մը սքանչելիք մը երեւան կը բերէ: Անտարակոյս Ան կարող էր նաեւ աշխարհի ջուր ծայրերուն վրայ երկնակարկառ շոգամեքենաներ գետեղել եւ անոնց միջոցաւ ծովուն ջուրը դէպի վեր բարձրացնել եւ անկէ ալ անձրեւի նման երկրի վրայ տեղացնել: Այդ պարագային մենք մարդիկ շատ պիտի հիանայինք: Այո, սակայն մենք չենք խորհիր եւ երբեք նկատողութեան չենք առնիր, որ նոյն բանը անաղմուկ կը կատարէ Անիկա օդի միջոցաւ: Նշանաւոր աստեղագէտ մը հաշուած է որ, եթէ երկրի վրայ բնակող բոլոր մարդիկ, — այրեր, կիներ ու մանուկներ, — ծովովը կենային եւ դոլերով ջուր քաշէին, 70,000 տարւան մէջ ծովուն ջրէն հազիւ այնքան առած պիտի ըլլային, որքան արեգակը մէկ տարւան մէջ լոկ մ'նջիկ կը շագիսնէ եւ կը բարձրացնէ: Այնքան փոքր ու ոչինչ է մարդկային ուժը՝ բազմաթիւ Աստուծոյ հանդարտ գործունէութեան:

Այս վերի ջուրերը, ամպերը մասնաւոր աշխարհ մըն են: Ով որ ծովէն հեռու կը բնակի, չկրնար ճանչնալ զանոնք իրենց մեծաքանցութեանն ու այլազանութեանը մէջ: Բայց իրենց բնական ծննդավայրին մէջ, ծովերուն վրայ, անոնք կը կազմուին ազատօրէն ու իրարու վրայ կը դիզուին ափարկու կուտակումներով: Հոն կրնայ նաւորդը անոր այլազան ձեւերը դիտել ու զուարճանալ: ... Բայց ով որ ամպերու աշխարհի իր կատարեալ փառաւորութեանը մէջ տեսնել կ'ուզէ, թող օդանաւով մը դէպի վեր բարձրանայ: Այսպէս Անգլիացի օդանաւորդ մը կը պատմէ թէ ինքը, երբ անձրեւոտ օր մը երկրէն դէպի վեր կը թռչէր, քիչ ետքը նուրբ գոլորշիներով ու մշուշով շրջապատուեցաւ, բայց շուտով կտրեց անցաւ զանոնք ու հաւաք ձգեալ սպիտակ ամպերու: Շատ ջանքած ասոնք ալ իր ոտքերուն տակն էին եւ ինքը այլեւս բոլորում էր լեռնակուտակ ամպերով, որոնք Մոնպլանի եւ Հիմալայայի նման դէպի կապոյտ երկնք կը բարձրանային՝ արեւին ճառագայթներովը լուսաճաճանջ եւ ստեպ փոփոխելով իրենց ձեւերը: Ան կը պատմէ թէ ինքը այդ հիւսքանջ աշխարհին մէջ՝ հազիւ կը համարձակէր շնչելու կամ շարժելու, քանզի մեծաշուք էր կատարեալ լուսնիւնը եւ ան ինքզինքը միտակ կը զգար իր Աստուծոյն հետ:

Սակայն Աստուծմէ ստեղծուած այս օդի խառնո՛ւց թէ միայն վերի ու վարի ջուրերը իրարմէ կը բաժնէ, հապա ուրիշ նպատակներու ալ կը ծառայէ: Արդէն ծանօթ է որ մենք անոր պէտք ունինք մեր շնչառութեանը համար: Բայց աւելին կայ. անոր միջոցաւ կարելի կը դառնայ նաեւ տեսնելը: Եթէ օդը արեւին ճառագայթները այնպէս չբաժնէր որ իրերը ամէն կողմէն լուսաւորուէին, այն ատեն բոլոր իրերուն միայն լուսաւորութեամբ կողմը պիտի տեսնէինք, իսկ միւս կողմը սեփ սեւ խաւարով շրջապատուած պիտի ըլլար: Օդն է որ լուսոյ ու ստուերի բոլոր երանգաւորումները յառաջ կը բերէ, եւ խողովոցիցի ու գրեթէ կուրցնող լոյսի եւ անոր հակադրութիւնը եղող սեփ սեւ շուրի փոխարէն կը յորինէ երկրի մակերեսին մեղմ ու ներդաշնակ պատկերը: Գեւ ուրիշ աւելի կարեւոր նպատակի մըն ալ կը ծառայէ մեծնորոտը. — ան տաք վերարկու մըն է, որ երկիրը եւ անոր բոլոր բնակիչները սառելէն կը պահէ: Շիտակ է, արեւին ճառագայթները շատ տաք, նոյնիսկ կիզիչ են, բայց եթէ օդ չըլլար, անոնք առարկայի մը միայն այն կողմը պիտի տաքցնէին, որոն վրայ կ'իյնային, բայց շուրի մէջ մ'նսցած կողմը

գերոյէն 100 աւտօման վար ցուրտին ենթարկուած պիտի ըլլար: Այդպէս է լաւանին մէջ եւ այդպէս եղած պիտի ըլլար նաեւ. հոս երկրի վրայ. եթէ օդը գոյութիւն չունենար, մեր մէկ կողմը պիտի խորովուէր. իսկ միւսը սառէր: Սակայն օդին միջոցաւ լոյսին կրակէ օւռքները կը բնական եւ անոր ուժը հաւասարապէս բաժնի կոյժ կը բաժնուի: Օդը՝ ինքը տաքնալէ ետքը՝ մեզ ալ կ'առնէ իր տաք վերմակին տակ:

Ասանք են մի քանին՝ երկրորդ օրուան մէջ Աստուծոյ ստեղծած հրաշքներուն: Լաւոյ նման օդն ալ կը վառարանէ Անոր մեծութիւնն ու զօրութիւնը: Իսկ մենք, որ այս ամենակարող Ստեղծիչը Քրիստոսի շնորհիւ իր մեր Հայրը կ'ընդունինք, քաջաւերուած կը գոցենք.—

Ան որ ամպերուն, օդին ու հովին
ձամբան կը ցուցնէ, ընծայքը կ'ուղէ,
Ինծի համար ալ ձամբայ պիտ գրանէ,
Ռեկէ իմ ոտքերս պիտ կրնան քայլ: (Շար.)

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱՅ

ՔԱՆԻ ՈՐ ԴԵՌԻ ՓԱՄԱՆԱԿՆ Է

Խոր լուսեան մէջ սքողուած էր փողոցին անկեանք տունը հոն:

Դուրսի սենեակին մէջ մայրիկին դադաղը դրուած էր:

Ամուսինը լալով կը կայնի վախճանեալին առջեւ. «Դուն ինծի համար վստահելի եւ թանկագին ընկերուհի մըն էիր, դու մեզի համար կը հոգայիր, աշխատեցար օրուան կանուխէն սկսեալ մինչեւ երեկոյ եւ կրեցիր համբերութեամբ բոլոր դժուարութիւնները աղօթող սրտով մը, մինչդեռ քիչերս կրցանք հասկնալ զայս»:

Դուստրը ծնրադրեց բղձկելով իր անշնչացած մայրիկին քով. «Այո՛, եւ որքա՛ն խորունկ սիրով սիրեցիր զմեզ եւ մենք չկրցանք փոխարինել քեզ մայրիկ, մայրիկ»:

Սենեակին միւս անկիւնը կծկուած էր երիտասարդ մը: Ոնեւ մէկը կարեւորութիւն չտար անոր: Երեսին նոյնիսկ չեն նայիր եւ իրաւամբ ալ, որովհետեւ թեթեւոյիկ կեանք մը ապրած է:

Երբ բոլորն ալ բաժնուեցան, ոտքի ելաւ երիտասարդը, մօտեցաւ դադսղին, երկար առնէն ի վեր առաջին անգամն ըլլալով իր աչքերը արցունքով լեցուեցան՝ «Մայրիկ» հեծեց նա, «Դուն միշտ բարի եղար ինծի հանդէպ: Նոյնիսկ երբ բոլորն ալ երեւ դարձուցին ինծմէ, դուն միայն սիրեցիր զիս, օ՛, որքա՛ն կը զղջամ զքեզ այսքան նեղած ըլլալու համար, բայց հիմա կը խոստանամ քու պաղ ձեռքիդ վրայ, թէ այսօր նոր կեանքին կը սկսիմ:

Վախճանեալը չլսեց այս ուխտը, բայց եթէ ողջ եղած ժամանակը լսած ըլլար, որքա՛ն երջանիկ պիտի զգար ինքզինքը:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՐՍԷՅԷ. — ԱՂՕԹԱԺՈՂՈՎ ՌՈՒՍԻՈՅ ՄԵՐ ՀԱՒԱՏԱԿԻՑԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

«Բանբերի ընթերցողներուն յայտնի է թէ Ռուսիոյ մէջ Աստուծոյ հաւատացողներ, որ կրօնքէն ալ ըլլան, անխորաքար եւ մանաւանդ աւետարանականներ մեծ դժուարութեան եւ հաւածանքի տակ կը գտնուին: Այս անցեալ տարիներուն հաղարար եկեղեցիներ եւ աղօթատեղիներ փակուելով՝ թաղանթներու, թանգարաններու ու զանազան հաւաքատեղիներու վերածուեցան:

Մեր հաւատակիցներ կը հօլածուին նաեւ սա տեսակէտով որ անոնք արածուելուն չունին իրենց զաւակները մինչեւ անոնց 16րդ տարեքը իրենց հաւատքին գիտութեան մասնակից ընելու: Այսու ամենայնիւ անաստուածեաններն ու անկրօն ընկերութիւնները ազատօրէն իրենց գաղափարները կը տարածեն դպրոցական մատող սերունդին մէջ: այս մասին ո՛չ միայն արգելք չկայ, հապա աւելի քաջաւերութիւն: Մեր հաւատակիցները նոյնիսկ հոցի ամսագի չեն կրնար ընդունիլ համայնաւար կառավարութենէն ընտանիքի համար օրական հացը գնելու իրենց դրամովը: Միլիոններ այս ազատութեան բերող բռնապետներէն կը տանջուին եւ հաղարարներ մահուան կենթարկուին:

Աշխարհի ամէն կողմերը այս ահարկու մեթոտներուն համար քրիստոնեայ սրտերէ ցառում մը պոռթկաց: Մարդկային տեսակէտով այդ հաւատակիցներուն մեծ բան մը ընել կարելի չէր, բայց կար բան մը, դոր ամէն մէկը ընելու պարտական էր, այն էր ամենազօրուոր գէնքին — աղօթքի դիմել: Ինչպէս աշխարհի ամէն կողմերը աղօթքներ բարձրացան առ Աստուած, նոյնպէս նաեւ ի Մարտէշէ, ուր Մարտ 30 ին, Կիրակի ժամը 5 ին աղօթքի համար միացած էին բոլոր Ֆրանս. Հայ. Անգլ. Զուից. աւետարանական եկեղեցիներ. Յոյն եկեղեցին ու Հրէաներն ալ մէյմէկ ներկայացուցին զրկած էին: Երկու բանախառնութիւններ եղան, որոնցմէ մին կը ներկայացնէր մեր հաւատակիցներու ահարկու վիճակը Սովիէթ կառավարութեան ներքեւ. երկրորդը ներկայացուց մեր պարտականութիւնը:

Առաջին. — Աղօթել հաւածուելներու համար, որպէսզի Տէրը անոնց փորձութեան ժամանակը կարճեցնէ եւ այդ փորձութեանց մէջէն ազատութեան միջոց մը պարգեւէ, որպէսզի Ս. Հոգին զանոնք զօրացնէ մինչեւ ի մահ հաւատարիմ մնալու: Որպէսզի Տէրը մեռնողներուն արեւնը գործածէ իբր եկեղեցիին սերմը:

Երկրորդ. — Աղօթել հաւածիչներուն համար, որպէսզի Տէրը անոնց սրտին մէջ գուրի զգացումը արթնցնէ, ու վերջապէս իրենք եւս հասկնան Սոցոսի նման թէ դժուար բան է խթանին դէմ կից դառնել: Աղօթել որ անոնք եւս վերջապէս խոնարհին իսաչին առջեւ:

Վերջին կէտը անմասկան էր: Հապա եթէ մենք ըլլայինք հաւածուողներուն տեղը, ի՞նչ դիրք պիտի բռնէինք: Մենք ալ մինչեւ ի մահ հաւատարիմ պիտի կրնայինք մնալ: Եթէ մեզի դժուար կուգայ, այսօրուցն իսկ սկսինք պատրաստուիլ ամէն պատահականութեան դէմ: Հաւատացեալներ մասնաւոր աղօթքի նիւթեր ընդունած, երկու ժամուան հաւաքոյթէն յետոյ ծանր շունչով եւ սակայն բարեխոսական աղօթքով բաժնուեցան իրարմէ:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH.

Տպգր. «ԲԱՆԲԵՐ»-ի, 7, Իււ Բաբեր